

ՄԵՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր գիտատեսական լիճակը.— ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՆ. Նամակ Մարտիկոբից. Նամակ Աւեր-
սանդրոյից. Նամակ Շուշուց. Ներքին լուրեր.
— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Թիֆլիսի ֆինանսա-
կան դրութիւնը. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒ-
ԲԻՐ.— ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՄԱԿԱՆ. Գէպի կորուստ:

ՄԵՐ ԳԻՏԱՏԵՍԵՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Թիֆլիսի չորս կողմը եղած գիւղերում
այս տարեկան ցամաքի կարկուտ
էր կէր, որը բաւական վնասէր էր ցանքե-
րին, ապա յայտնվել է եղջիւրաւոր անա-
տէներէր ժամանակը: Այդ ցաւը տիրում
է այժմ քաղաքին շրջակայ գիւղէր բոլոր
գիւղերում և տարածվում է արդէն նոյն
խիւ մինչև Մանգլիս: Նախ կովը կամ եղը
սկսում են սաստիկ զոգացնել ջերմութեան
առաւելումը սաստիկ բարձրանում է, ապա
միւս օրը կենդանին սկսում է լուծել և
շատ անգամ երկու, երեք օրվայ մէջ կեն-
դանին սատկում է: Յաւին գլխաւորապէս
զոհ է կենում քնքայլ և լաւ տեսակի կաթ-
նատու կովեր, օրինակ շիջարական տե-
սակի կովերը, որոնք բերված են մեզ մօտ
Ստաւրոպոլի կողմերէր երկրից, նմանա-
պէս և օս տեսակի քնքայլ կաթնատու կո-
վերը: Յաւին դիմանում է աւելի թուրք
ցեղի աւաւերը, որը աւելի կովայ տեսակի
է, բայց ուրիշ կողմից և աւելի քիչ կաթ
է տալիս: Գիւղատեսակներին և գիւղացիներ-
րին, ի հարկէ, աւելի զգալի է այն կա-
տարելագործված, կաթնատու կովերի տե-
սակի կորուստը, ինչպէս են, օրինակ, շիջ-
արական և օս տեսակի կովերը, որոնք օ-

րական շատ անգամ մինչև 60 բաժակ կաթ
են տալիս: Կոտորածը շատ մեծ է շրջա-
կայ գիւղերից մի քանիսնում: շատ տեղ
պատահել է, որ 50 կովից՝ 30 հատ
սատկել են մի քանի օրում: Դա ահագին
պրօցեստ է...

Կառավարութիւնը ուղարկել է անասնա-
բույժերին քննելու գիւղական տաւարի դը-
րութիւնը և կարելու խորհուրդներ տալու
գիւղատեսակներին իրանց աւաւերը բժշկե-
լու ամենագործնական միջոցներ մատնի:

Այդ միջոցները սրանք են. Նախ այն
գիւղում, որտեղ յայտնվել է կենդանիների
կործանիչ ցաւը, պէտք է խիստ կարա-
նի նշանակել, որպէս զի հիւանդ կենդա-
նիները չը վարակեն առողջներին: Բայց
մեր գիւղացին նախ չափից դուրս անհոգ
է երկրորդ նա միջոց է ժամանակ չունի
կարանտին հաստատելու և նրա ճիշդ գոր-
ծադրութեան վրա հսկելու համար: Հի-
ւանդ կովեր ունեցող նախիրը այնու ամե-
նայիս յարակցում է հարկան գիւղի ա-
ռողջ նախիրի հետ, գիւղացին պէտք է
զիցուք զարու ցանքերը հնձէ, և նա
վերցնում է հիւանդ կենդանիներ իր մէջ
պարունակող նախիրից մի երկու, կամ
չորս եղ, լծում է նրանց այլիւն և դնում
է դաշտը հունձը հաւաքելու համար...
Այդպիսով հիւանդութիւնը հետզհետեւ
տարածվում է շրջակայներում:

Թիֆլիսից հրահանգ ստացան գիւղերում
շրջելու մեր ամենայայտնի անասնաբույժեր,
ինչպէս պ. Կ. Մէլքոնի և Բոյատովի իրանց
ֆէլդշերներով: Ահա գիւղացիներին նրանց
ստեղծ խորհուրդները. նախ պէտք է հա-
տատել խիստ կարանտին կենդանիների ցա-
ւով դեռ ևս չը վարակված գիւղերի սահ-
մաններում, ապա հիւանդացած կենդանու-
ն պէտք է առանձնացնել առողջներից, օրա-

կան գոնէ 6 անգամ չափել ջերմաստիճանը
նրա մարմնի տաքութիւնը, սրակէ հիւանդ
կենդանու կաշու տակ խիւնին հեղուկ դը-
րութեան մէջ և այլն... Սակայն այդ տե-
սակ պատուէրներ կարող են կատարել մեր
մասնաւոր գիւղատեսակներից ոմանք, որոնք
պատկանում են լուսաւորված, ինտելիգենտ
գաւաւագրին, բայց միթէ կարելի է սպասել,
որ այդ տեսակ պատուէրներ կը հասկանայ
գիւղացին և միջոց ու հասկացողութիւն կու-
նենայ նրանց գործադրելու: Եթէ մենք ու-
զում ենք, որ գիւղացին այդ բոլոր միջոց-
ները ճշգրտեման գործադրի, պէտք է ա-
մեն տեղ ֆելդշերներ նշանակվեն կառավա-
րութեան կողմից, որոնք կը հսկեն անաս-
նաբույժերի ստեղծ անհրաժեշտ հրահան-
ներին ճիշդ կատարման վրա... Իսկ դա դը-
ժուար թէ իրագործելի է մեզանում...

Եւ դժբաղդութիւնն այն է, որ մեզա-
նում մինչև այժմ չը կան ոչ կարկուտի, ոչ
էլ կենդանիների կոտորածի դէմ ապահո-
վողական ընկերութիւններ: Եթէ գոնէ
այդ տեսակ ընկերութիւններ հաստատվէին
մեր երկրում, մեր գիւղացիներն ու գիւ-
ղատեսակները այդքան սարսափելի վնաս-
ներ չէին կրի ոչ կարկուտից, ոչ էլ կենդա-
նիների կոտորածից:

Ժամանակ է վերջապէս մտածել մեր
երկրում: Անդրկովկասում, գիւղատեսակա-
կան ապահովագրական ընկերութիւններ
հաստատելու անհրաժեշտութեան մասին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԱՐՏԻԿՈԲԻՑ

Յուլիսի 20-ին

Առաջական սովորութիւններից մէկն է նաև

ուսումնասիրութիւնը, որ կորցնելով իր նախկին
նախնական նշանակութիւնը, ստացել է մի տեսակ
զուարճալի բնաւորութիւն:

Այդ զուարճութիւնը որ միշտ վերջացել է
զուգուստով, քէֆով ու հարաջ հրօցով—այնու ամե-
նայիս չէ խանգարել ուսումնասիրելու ջերմութեան
զուգնանք. ամենատարակ տրամադրութեան բո-
ւալէին անգամ նրանք չեն մոռացել իրանց նու-
րատութիւնները, չեն խնայել իրանց կօպէկները,
առատութեամբ չնայել են այս կամ այն սրբա-
վայրի բարեխորհրդական գործին, և ահա ժո-
ղովրդի այդ նուիրած կօպէկները չտրոհվել է, որ
սրբավայրերը հետզհետեւ բարեկարգվում են՝ սե-
նականներն աւելանում, եղած խարխուլ, խորթա-
նաման սենեակները բարիօրիւնով, կանոնաւոր-
վում են և այլն:

Հետեւաբար ժողովուրդն իրանք պիտի ունե-
նայ սպասելու առաւել յարմարութիւնների. նա
պիտի պահանջէ, որ իր նուէրներով տեղի ունե-
ցած բարեխորհրդականներ ծառայեն իրան նոյն ժո-
ղովրդի օգտին, նրա յարմարութիւնների համար
և ոչ թէ առանձին-առանձին անհատների արտո-
նութիւն դառնան, որ տարաբարձաբար, դար-
ձել են:

Եթէ կան փոքր ի շատ կարգին շինութիւննե-
րով սրբավայրեր, եթէ կան անտառայգատ և ա-
ռողջարար օդ ունեցող ուսումնասիրող, այդպիսի-
ներն անմատչելի են դարձել, համարեա, հասա-
րակ դատարարին:

Խեղճերը—որ միշտ դատարարութեան են ամա-
րային անտանիլ տօթին և փողոցային խեղդող
փուշուն, որ ոչ դադախար և ոչ միջոց ունեն ա-
մաւանդներ գնալու, վաղուց յետէ ունեն
մի գովիկի սովորութիւն շարժվելով, շատ
անգամ և ամառ ուսումնասիրող դնալ և ամ-
բողջ ընտանիքով լաւ ժամանակ անցկացնել:

ԲԱՆԱՍԻՄԱԿԱՆ

ԳԵՊԻ ԷՐԶՐՈՒՄ

Ներկայ տարեկան ապրիլի 19-ին, հինգշաբթի
օր, դուրս գալով Օլթիից, երեք բեռնակիր տա-
ճիկներէր հետ, ուղևորվեցանք դէպի Էրզրում: Ժամ
ու կէս ճանապարհ գնալով հասանք սահմանա-
գիւղը, և մաքսատնից ստացած թուղթը, բեռ-
ների վերաբերմամբ, ցոյց տալով սահմանագիւ-
ղի տարածքին, անցանք տաճիկական սահմանը: Մի
ժամէ չափ ևս գնալով մտանք Կալա-Բօղազ
թրքական գիւղը, ուր լինում են թուրքաց մաքսա-
տունը և սահմանագիւղի գիւղատնիկները: Թուղթ
15-ի չափ, իրանց հարկաւորութիւն: Թէ մաքսատունը և
թէ գիւղատնիկների բնակարանը գիւղական անշուք
և վերջին ատոմանի կեղտոտ խրճիթներ են,—
ներս մտնողին այդ խրճիթները ներկայացնում են
չքաւոր մարդու բնակարան. մի հասարակ տախ-
տակէ դիման է դրված, վրան նստած են մաքսա-
տնի իր գրագրողը և մի քանի ծառայողներով:
Կատուհաններում ընկած են մի երկու տետրակի
կտորներ, ծառաներն էլ անկիւններում այստեղ
այնտեղ չիլեւեղները բերաններին պղպտած են:
Իսկ դուրսը դրան կից է և գիւղացու գոմի
դուռը, որտեղից տարիներով դուրս թափած ա-
նասունների աղբը իրար վրա ժողոված մի
բլրի են նմանում: Այս դրութեան մէջ է և սահ-
մանագիւղի գիւղատնիկի և իրանց հարկաւորութիւն
բնակարանը: Այս գիւղի Կալա-Բօղազ կոչվելու
պատճառն այն է, որ մի խոր ձորակի մէջ է
ընկած և նրան մօտ բարձր քարափների վրա ե-
րևում են մի փոքրիկ ամրոցի մնացորդներ:
Մեր բեռները մաքսատան առջև իջեցնելուց և
փոքր ինչ հանգստանալուց յետոյ, մաքսատնից
մեզ յայտնեց, որ բոլոր սնուկները (որոնք թուղթ

10 էին) պէտք է խուղարկվեն, այս պահանջին
համաձայն բացեցինք մի քանիսը, հետաքրքրու-
թեամբ նայեցին լուսանկարչական պարագաներին
և պատկերներին, իսկ մնացածն էլ չը նայեցին
ասելով. «այնքան դանդաղ բաներ ունեք, որ
իմ խեղճ սրանցից բան չէ կորուստ, աւելի լաւ է
մնուկները կնքելը և այնպէս տարեք Էրզրումը:
մաքսատունը, նրանք գիտեն, ինչպէս կուղեն թող
անին»: Եւ իսկայն պատուիրեց գրագրին, որ բո-
լոր սնուկներն էլ կնքով ամրացնէ և այնպէս էլ
կուղէ: Երբ ամեն բան վերջացած էր և մենք
պատրաստվեցանք դուրս գալու, ներկայացաւ
սահմանագիւղի գիւղատնիկի ղեկավարին, ինչորեւ
որ ճանապարհի ապահովութեան համար մեզ մի
զինուոր տալ: Իսկայն կատարվեցաւ մեր խնդրը:
այնուհետև մենք ամենքս միասին 7—8 հոգով
այնտեղից դուրս եկանք շարունակելու մեր ճա-
նապարհը, մեզ հետեւում էր և մաքսատան կողմից
նշանակած հսկող մարդը, որը մի աւելոր թուրք
էր և ոչինչ բանով չէր դանդաղանում շինական
թուրքից, բացի կրճէրն կայացած մի պրնձեպ
նշանից, որը ցոյց էր տալիս նրա մաքսատան
ծառայող լինելը (դրճի): Երբեք հին, պատուա-
տած, գլխին քրոյ, ոտներին տրեխներ, ձեռքի
մտրակը մի կտոր փայտից և մի կտոր պարանից
բաղկացած, հեծած ձին էլ մի նոր սովորեցած
մատակ:

Երբ հասանք Արդուս գիւղը մեզ ուղեկցող
զինուորը վերադարձաւ, իսկ մենք այնտեղ գիւղե-
րեցինք. առաւօտեան այդ գիւղը տեսնուեցինք
ինչպիսիք երկու մարդ ուղեկից տալու, նա ևս
ինչորեւցինք երկու մարդ ուղեկից տալու, նա ևս
չուտով կատարեց մեր խնդրը, նշանակելով
երկու մարդ, որոնք երկու օր մեզ հետ ուղեկե-
ցին մինչև Ղալա-Բօղազ գիւղը և իրանց վարձը
ստանալով վերադարձան:

Ղալա-Բօղազ գիւղ չը հասած՝ մեր բեռնակիրը
ցոյց տալով բարձր ձիւնապատ լեռները Գեփրան
անունով պատմեցին թէ ինչպէս 10—11 ամիս
սրանից առաջ, այսինքն 1889 թվ. յունիս-յուլի-

տին լեռան մի կողմը անձրեւից և ձնից փափկա-
նալով վայր էր իջել և 40 անից բաղկացած
տաճիկական խմբից գիւղը բոլորովին տակով
արել, այնպէս որ հետո դաշտերում եղած 20-ի
չափ մարդիկ էին միայն աղաւթի: Սրա վրա
աւելացրին թէ յիշեալ անաղաղ գիւղացիք այս
թշուառութիւնը նախատեսելով քանիցս խնդրել
էին կառավարութիւնից, որ իրանց ուրիշ ապա-
հով տեղ տալ տեղափոխվելու, բայց պատասխանը
այսօր վաղը ձգվում: այնքան ուշացրին, մինչև որ
այս դրութեան արժանացրին:

Հաստատվինք անաղաղացիք և մի նորոճե-
աղահանքի. բաւական հեռաւորութեամբ փայտեայ
խորովակներով աղի աղբիւրի ջուրը բերում են և
լցնում մի տափարակ տեղում շինած 50-ի չափ
փոքր լճակները և մի քանի օր թողնելով, երբ
ջուրը ցամաքում է, աղի սպիտակ աւաղը ժողո-
ւում են և բանեցնում խորութեամբ և այլ տեղե-
րում:

Հարկ է յիշել, որ տաճիկական սահմանից սկսած
մինչև Ղալա-Բօղազ ոչ մի հայր գիւղ չը կայ,
բոլորն էլ տաճիկ են, այն էլ շատ սակաւ, որով
հետև երկրորդ բոլորը սար ու ձոր է և մեծ
մասամբ քարոտ և աւաղոտ, լաւ հող քիչ կայ
վար ու ցանք: համար, առհասարակ մինչև Էր-
զրում գիւղերը ամենն էլ ծառատանի կողմից
զուրկ են, ամեն մի գիւղում տեսնում էք միայն
մի քանի ուռենի և մի քանի բարդենի, ուրիշ
ոչինչ: Ղալա-Բօղազում և նրան մօտ վերին-գիւղում
միայն հայր են, այն էլ խառն թուրքերի հետ:
Նրանից դէպի Էրզրում գնալով մտանք մի թրքա-
նակ գիւղ Կիրակոսակ անունով: Այնտեղից կա-
րել է եղրակացնել, որ այս գիւղը առաջ հայա-
նակ պէտք է եղած լինի. խոր ձորակից հոսելով
գիւղամէջից անցնում է մի վճիռ և առողջարար
գետակ: հայերը սրան անուանում են խաչա-
փայտի ջուր, սրա ակունքի մօտ գտնվում է և մի
հին մատուռ: Այս գիւղից բուականաչափ մօտե-
նալով Էրզրումին, հասանք Հինգ գիւղը, այս գիւ-

ղից մի վերստաչով հեռու ճանապարհից դուրս
դէպի արեւելք գտնվում է Կարմիր վանքը, իսկ
աւելի մօտ Էրզրումին կայ և մի ուրիշ վանք ս.

Լուսաւորիչ անունով: Երկուսն էլ շէն են:
Մտնելով Էրզրում, գնացինք ուղեկի մաքսա-
տուն. մեզ ուղեկցող սահմանագիւղի մաքսատան
զօլին բերած թուղթը յանձնեց մաքսատանը. փոքր
միջոց անցնելուց յետոյ մեզ յայտնեցին, որ կարող
ենք գնալ հանդիսանալու: Վերցնելով այն ամեն
բաները, որոնք կնքված էին, գնացինք Բաւարմա-
չանց խմբի և այնտեղ սենեակ վարձելով: մի երկու
ժամ հանդիսացանք և ապա դարձանք մաքսա-
տուն: Բացելով անուկներս, խուղարկեցին ամենն
էլ, և արդելված ոչինչ չը գտնելով, սկսեցին մաքս
ուղի. սակարկութիւնը սկսվեց. նրանցից մինը
առաջարկեց 5 ոսկի տալ (45 ռուբլու չափ). մեր
պատասխանը լսելով թէ ծախու ոչինչ չը կայ,
բոլոր եղանակն էլ արհեստի վերաբերեալ գոր-
ծիք և պարագաներ են, ուստի, ինչպէս Ռուսաս-
տանում և Պարսկաստանում աղաւթ է արհեստա-
ւորը մաքս վճարելուց, նոյնպէս և այստեղ պէտք
է լինի: Սրան պատասխանեցին. «Այլ են Ռուսաս-
տանի և այլ Պարսկաստանի կանոնները. այստեղ
նրանց նման չէ, ամեն բանից էլ մաքս կառնենք,
քիչ խաթր կանենք. վերջապէս 3 ոսկի կը տաս՝
կապաւով: Զը համաձայնվելով մտալ միւս սե-
նեակը, ուր նստած էր մաքսապետը և իրողու-
թիւնը յայտնելով, ինչորեւցի վարկել ըստ օրինի:
Իսկայն կանչելով ծառաներից առաջաւորին, նա
ասեց. «Ինչո՞ւ էք այս մարդից աւելորդ փող պա-
հանում, գնա կարգին վերջացրու բանը»: Դուրս
գնացինք: Մեզ ասեցին. «Հորովհետեւ սոսմարում
արդէն գրված է և ջնջել չէ կարելի, և բացի այս
եթէ ամեն եկող-գնացողից փող չառնենք, մեր
ապրուստը ինչպէս կը լինի, ուրեմն սուր ընդա-
մանը 72 դրուց (6 ռ.) և վերջանայ: Տեսնելով որ
այլ ևս չարժէ խոսակցութիւնը երկարացնել,
տուեցի 72 դրուցը և բեռները յանձնելով սալլա-
պանին, տարանք մեր բնակարանը:

[illegible]

